

ՓՈՐՁՈՒԹԵԱՆ ՄԷ՞Ձ ԵՍ

Յիսուս Սուրբ Հոգիով լեցուած՝ վերադարձաւ Յորդանանէն: Ապա Սուրբ Հոգիին կողմէ առաջնորդուած՝ գնաց անապատ, ուր քառասուն օր փորձուեցաւ Սատանայէն: Այդ օրերուն ո՛չ կերաւ եւ ո՛չ ալ իմեց: Երբ քառասուն օրերը ամբողջացան, Յիսուս անօթեցաւ:

Սատանան ըսաւ իրեն.

- Եթէ Աստուծոյ Որդին ես, հրամայէ՛ որ այս քարը հաց դառնայ:

Յիսուս պատասխանեց.

- Օրէնքի գիրքին մէջ գրուած է. «Մարդ միայն հացով չ'ապրիր, այլ՝ Աստուծոյ բոլոր խօսքերով»:

Ապա Սատանան հանեց զինք բարձր լեռ մը եւ ակնթարթի մը մէջ իրեն ցոյց տուաւ աշխարհի բոլոր թագաւորութիւնները եւ ըսաւ.

- Այս բոլորին վրայ իշխանութիւն եւ անոնց փառքը քեզի կու տամ: Անոնք ինծի տրուած են եւ որո՞ւ որ ուզեմ՝ կու տամ: Արդ, եթէ ինծի երկրպագութիւն ընես՝ այդ բոլորը քեզի պիտի ըլլան:

Յիսուս ըսաւ.

- Օրէնքի գիրքին մէջ գրուած է. «Քու Տէր Աստուծոյդ պէտք է երկրպագես եւ գայն միայն պաշտես»:


Յետոյ Սատանան գայն երուսաղէմ տարաւ եւ կանգնեցուց տաճարի աշտարակներէն մէկուն վրայ եւ ըսաւ անոր.

- Եթէ Աստուծոյ Որդին ես, դուն քեզ այստեղէն վար նետէ: Քանի Սաղմունքներուն մէջ գրուած է, թէ «Աստուած իր հրեշտակներուն պիտի պատուիրէ, որ քեզ պահպանեն» եւ թէ «հրեշտակները քեզ իրենց ձեռքերուն վրայ պիտի վերցրնեն, այնպէս որ ոտքդ քարի չգարնուի»:

Յիսուս պատասխանեց.

- Օրէնքի գիրքին մէջ գրուած է. «Քու Տէր Աստուածդ չփորձես»:

Սատանան ամէն տեսակի փորձութիւն վերջացնելէ ետք՝ ժամանակուան մը համար հեռացաւ Յիսուսէն:



ԵԿԵՂԵՑԻ

Եկեղեցին մէկ է,

որովհետեւ անոր հիմնադիրը՝ Քրիստոս մէկ է: Այստեղ կ'ուզեմ մէջբերել Յիսուսի առաքեալներուն ուղղած յորդո-բակ վերջին կտակէն հետեւեալ խօսքերը, որոնք եկեղեցոյ մէկութեան մասին գեղեցկագոյն վկայութիւնը կու տայ:

Կ'աղօթեմ որ անոնք բոլորն ալ մէկ ըլլան, ինչպէս դուն, ո՞վ Հայր, իմ մէջս ես եւ ես քու մէջդ, այնպէս ալ անոնք մեր մէջ ըլլան... (Յովհ. Գլ. ԺԷ. 21): Քրիստոսով միացած հաւատացեալներու ամբողջութիւնը եկեղեցոյ նուիրական Խորհուրդին մէջ անբաժանելի է, որովհետեւ եկեղեցին ինք անբաժանելի է, որպէս Քրիստոսի մարմինը:

Չանագան արանդութիւններ, լեզուական տարբերութիւններ, եւ տակաւին նոյնիսկ ազգային եւ դաւանաբանական վեճեր կրնան տարբեր գունաւորումներ անուանումներ տալ եկեղեցիներուն, բայց քրիստոնէայ անունը ճակտին կրող բոլոր եկեղեցիները կը մնան Մէկ անբաժանելի, համաձայն Հաւատոյ Հանգանակին:

Շարունակելի

ՀԱՍՅԷ.

ՃՐԱԳ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ - ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ - Bourj-Hammoud, P.O.Box 80810 -Tel/Fax:01-258300- facebook-ի էջ jcrak ճրագ թերթ



ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԾԱՇԱՀԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

Ես.1.2-15: Հո. 6.12-23

ՅԻՍՈՒՄ ԶՐԻՍՏՈՍԻ ԱԲԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ 12.1-8

ԱԲԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ 12.1-8

Շարաթ օր մը Յիսուս արտերուն մէջէն կ'անցնէր: Աշակերտները անօթեցած ըլլալով սկսան հասկ փրցնել եւ ուտել: Երբ փարիսեցիները ասիկա տեսան, ըսին Յիսուսի. «Տես, աշակերտներդ ի՛նչ կ'ընեն. բան մը՝ որ արգիլուած է Շարաթ օրով ընել»:

Յիսուս պատասխանեց. «Չէ՞ք կարդացած, թէ ի՛նչ ըրաւ Դաւիթ, երբ ինք եւ իր հետ եղողները անօթեցան: Աստուծոյ տունը չմտա՞ւ եւ Առաջաւորութեան հացը չկերա՞ւ, որ օրէնքին համաձայն միայն քահանաներուն արտօնուած էր եւ ո՛չ թէ իրեն կամ իր հետ եղողներուն: Կամ չէ՞ք կարդացած Մովսէսի Օրէնքին մէջ, թէ Շարաթ օրեր քահանաները տաճարին մէջ կը սրբապղծեն Շարաթը եւ սակայն անիկա մեղք չի համարուիր իրենց: Ահա կ'ըսես՝ ձեզի, որ տաճարէն ատելի մեծ մէկը կայ հոս: Եթէ իրապէս հասկնայիք թէ ի՛նչ կը նշանակէ մարգարէին խօսքը. «Ողորմութիւն կ'ուզեմ եւ ոչ զոհ», այն աստե՛ն չէիք դատապարտեր անմեղները, որովհետեւ մարդու Որդին Տէրն է Շարաթին»:

Ի՞նչն է քեզի համար լաւ բանը

Օր մը երկինքով չհետաքրքրուած մարդու մը հարց տուի. «Ի՞նչն է քեզի համար լաւ բանը»: Ան պատասխանեց. «Դիրքն ու դրամը»: Ան ինքզինք խաբած պիտի ըլլար, եթէ տարբեր պատասխան տար: Իսկ դուն, սիրելի ընթերցող, ի՞նչն է քեզի համար կարելոր բանը. դիրքն ու դրամը, թէ՛ Յիսուսի սերն ու խաչը: Դիրքն ու դրամը չեն կրնար քեզի խաղաղութիւն տալ եւ հանգիստ շնորհել: Կրնաս մեծ գումարներ ունենալ բայց նոյնքան ալ մեծ մտահոգութիւններ: Կրնաս բարձր դիրքերու հասնիլ բայց երբեք ալ հանգիստ չգտնել: Աստուծոյ գաւակներէն շատե՛ր ո՛չ դիրք ունէին եւ ո՛չ ալ դրամ, բայց եւ այնպէս, ունէին ներքին խաղաղութիւն մը, որ զիրենք անյաղթահարելի կը դարձնէր:

ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ

ՀԱՅՈՑ ՄՐՏԻ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ՄԵԾՆ ՆԵՐՍԷՍ

Ներսէս Հայրապետ կաթողիկոս ձեռնադրուեցաւ 353 թուականին, Արշակ Բ. թագաւորի օրով: Ան թագաւորին ֆարտուղարն էր, սակայն Փառէն Աշտիշատեցի կաթողիկոսի մահէն ետք թափուր մնացած հայրապետական աթոռին համար արժանաւոր մէկը պէտք էր ընտրել: Այս արժանաւոր անձը հանդիսացաւ Յուսիկ Հայրապետի թոռը՝ Ներսէս:

Պատմութիւնը Ներսէս Հայրապետին ընծայած է ՄԵԾ Տիտղոսը իր կատարած մեծ գործերուն եւ բարեկարգութիւններուն համար: Հիմնական նպատակն էր հայ ժողովուրդի սրտին մէջ ֆրիստոնէական ազնիւ գագուսմները ներմուծել եւ արմատացնել: Այսպէս օրինակ, կը ֆաջալերէր իր ժողովուրդը, որ հեթանոսական սովորութեամբ մահուան առջեւ անյոյս չողբան, այլ՝ յարութեան յոյսով երկինքի արժայութեան հաւատան: Անդադար կը ֆաջալերէր, որ մարդիկ բարեգործութիւն կատարեն եւ օրինակը ինքն իսկ տալով, իր տան մէջ կը հոգար որբերն ու չֆաւորները:

Մեծն Ներսէս կաթողիկոս իր պաշտօնին գլխուն անցնելով մեծ բարեկարգութիւններու ձեռնարկեց:

Անհամար վանքերու, դպրոցներու, որբանոցներու հիմնադրութիւնը իր աշխատանքին մէկ բաժինն էր: Ան կազմակերպեց հայ եկեղեցական դասը, ֆահանգներ, եպիսկոպոսներ եւ ֆարոգիչներ ամէն կողմ դրկելով: Կանոնաւորեց եկեղեցիներու արարողութիւնները եւ որոշ օրեր ու ժամեր նշանակեց անոնց գործադրութեան համար:

Ահա իր այս բարեսիրական գործերուն շնորհիւ է, որ ան դարձաւ Հայոց սրտի լուսաւորիչ:

ՀԱՐՅՈՒՄ ՊԱՏԱՍԽԱՆ ԲԱԺԻՆ

ՄԱՐԴ ԱՐԱՐԱԾԸ ԿՐՅԱՒ ԻՐ ԿՈՉՈՒՄԻՆ ՏԵՐՆ ԸԼԼԱԼ ՈՒ ԿԱՏԱՐԵԼ ԻՐ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ:

Ո՛չ. Ադամ Աստուծոյ բոլոր բարիքները վայելելով հանդերձ՝ անհնազանդ գտնուեցաւ Աստուծոյ ու չկրցաւ տերն ըլլալ իր կոչումին եւ կատարել իր պարտականութիւնը:

Ադամ եւ Եւա իրենց գործած յանցանքի պատճառով կորսնցուցին իրենց փառքն ու սրբութեան քողը: Մեղքը ապականեց զիրենք ու մերկացուց սրբութենէն, որովհետեւ չկրցան Աստուծոյ սրբութեան առջեւ կայմիլ ու ջանացին ծածկուիլ թզենիի տերեւներով:

Անհնազանդութեան մեղքին պատճառով անարժան դարձան դրախտին վայելչութեան ու զրկուեցան անկէ:

Ո՛Վ ՄՂԵՑ ՄԱՐԴԸ ԱՆՅՆԱԶԱՆԴՈՒԹԵԱՆ:

Մարդուն նախանձորդ թշնամին՝ չար սատանան, որ բանասերկու է եւ ստախոս (Յովհ. 8.44: Ա. Պետ. 5.8):

Ո՛Վ Է ՍԱՏԱՆԱՆ ԵՒ ԻՆՉՈՒՄ ԶԱՍԱՐ ԱՅԴ ԲԱՆՍԱՐԿՈՒ ՕՁԸ ԱՆՅՆԱԶԱՆԴՈՒԹԵԱՆ ՄՂԵՑ ՄԱՐԴԸ:

Սատանան նախապէս կը կոչուէր Արուսեակ եւ երկինքի հրեշտակներուն մէջ բարձր դիրք էր պատիւ ունէր: Ան հպարտ հրեշտակներուն մէջ բարձր դիրք ունէր: ապստամբեցաւ իր Արարիչին դէմ ուզեց տեղը առնել, այդ պատճառով Աստուած վար ձգեց իր բարձրութենէն: Պատժեց նաեւ անոր հետ չար հրեշտակները (Եսայի 14.12-15: Մտթ. 25. 41: Բ. Պետրոս 2.4: Յուդ. 1.5):

Հ Ո Գ Ե Ի Ո Ր Պ Ա Տ Գ Ա Ս

ՄԵՐ ՄԵՂՔԵՐԸ ՄՈՒՆԱԿԼՈՎ ՄԵՐ ՈՒՇԱԿՐՈՒԹԻՒՆԸ ԶԿԵՂՈՒՄՆԵՆՔ ՄԵՐ ԵՂՔԱՅՐՆԵՐՈՒ ՄԵՂՔԵՐՈՒՆ ՎՐԱՅ

Օրէնքի ուսուցիչներն ու Փարիսեցիները պահ մը մտոցած էին իրենց գործած բարոյական մեղքերը եւ իրենց ամբողջ ուշադրութիւնը կեդրոնացուցած էին այս խեղճ կնոջ վրայ, որ շնութիւն ըրած աստէն բռնուեցաւ (Յե. 8.4): Քրիստոս իր յանդիմանական խօսքով՝ «Ձեր մէջէն անմեղը թող ինք առաջին քարը նետէ անոր վրայ» (Յե. 8.7), հրաւիրեց զանոնք իրենց ուշադրութիւնը կեդրոնացնելու իրենց գործած բոլոր մեղքերուն վրայ ընդհանրապէս եւ բարոյական մեղքերուն վրայ մասնաւորաբար:

ՄԵՐ ՍՈՐՎԵԼ Ի Ք Հ Ո Գ Ե Ի Ո Ր Դ Ա Ս Ը

Սիրելի ընթերցող, չդատապարտենք Օրէնքի ուսուցիչներն ու Փարիսեցիները շնացող կնոջ նկատմամբ իրենց ցուցաբերած անգութ վերաբերմունքին համար, այլ՝ եկէք քննենք մենք զմեզ եւ տեսնենք, թէ արդեօք մենք եւս իրենց նման անողորմաբար չե՞նք վերաբերիլ մեր եղբայրներուն եւ քոյրերուն հետ: Մենք եւս յաճախ մոռնալով մեր 88 գործած յանցանքները՝ մեր հայեացքները չե՞նք կեդրոնացնէր ուրիշներուն գործած յանցանքներուն վրայ:

ԵԹԷ ԿԱՍ ԵՐԲ Կ՛ՈՒՉԵՍ...

ԵԹԷ ԻՆՔՉԻՆՔԻ ԱՏՈՒԾՈՅ Կ՛ՈՒՉԵՍ ՅԱՆՁՆԵԼ, Կարդա՛ր՝ ՍԱՂՄՈՍ 23

Տէրն է հովիւս, ուստի որեւէ բանի կարօտ պիտի չմնամ: Դալար արօտավայրերու մէջ կը մակադեցնէ զիս, հանգստարար ջուրերուն զիս կը տանի: Կը վերանորոգէ զիս եւ ուղիղ ճամբաներէ կ'առաջնորդէ, որպէսզի իր անունը փառաւորուի: Նոյնիսկ երբ որ մահաստուեր ձորերէ կ'անցնիմ, չարիքէ մը չեմ վախնար, Տէ՛ր, քանի որն իմ հետս ես: Քանի ցո՛ւպդ զիս կ'առաջնորդէ եւ գաւազանդ կը պաշտպանէ, եւ ինքզինքս ապահով կը զգամ: Ինձի ինձոյքի սեղան կը պատրաստես թշնամիներուս աչքին առջեւ. իբրեւ պատիւ՝ անուշահոտ իւղով կ'օծէ գլուխս, եւ բաժակս մինչեւ բերան կը լեցնես: Անպակաս պիտի ըլլան վրայես՝ որպէսզի կեանքիս ամբողջ տեւողութեան տաճարիդ մէջ բնակիմ:

ԱՂՕԹՔ

Քեզի՛ կ'ապաւինիմ, Տէ՛ր, որ քաւարան եւ մեղաւորներու եւ դարան հալածուածիս համար: Փախուստի՛ մատնէ թշնամիս: Ուրիշ օգնական չունիմ, Դուն ես միայն անձիս պահապանը: Փրկէ՛ զիս վտանգէն, ազատէ որոգայթներէն եւ արժանացո՛ւր ըլլալու յաւերժի որդի: ԵՓՐԵՍ ԱՍՈՐԻ